ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/05

ք. Երևան «07» մայիս 2019 թ.

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն, ի դեմս Գոհար Գրիգորյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դավթյան» ՍՊԸ ն, ի դեմս տնօրեն Արամ Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային փաթեթների մշակման ծրագրեր ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն՝

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի

միջոցով (գործողության իրականացման ծեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3)։ Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում)։

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը։

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը։ Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ծեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ։

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը։

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5890000 (հինգ միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ։

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները։

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը։

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը։

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար։

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով։

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով։

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ։

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով։

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց։

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե Հասցե՝ Արշակունյաց 7 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Խ/Հ 900013220026 ՀՎՀՀ 02534328	«Դավթյան» ՍՊԸ ՀՀ, Տավուշի մարզ, գ. Սևքար 19 փ. 1 Նրբ. տուն 2 «Արարատբանկ» ՓԲԸ Հ/Հ 15100293081040100 ՀՎՀՀ 07618736
Գլխավոր քարտուղար ______ Գ. Գրիգորյան (ստորագրություն)	Տնօրեն ______ Ա. Դավթյան (ստորագրություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						Մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	48981300/1	Ներկայացված է ստորև	դրամ	5690000	1	Ք. Երևան Արշակունյաց 7	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մեկամսյա ժամկետ

Տեխնիկական բնութագիրը

1. Ընդհանուր նկարագիրը

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն արդիականացնում է անշարժ գույքի գնահատման, քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնող մասնագետների որակավորման, ինչպես նաև անշարժ գույքի ռեգիստրների մասնագիտական գիտելիքների ստուգման էլեկտրոնային ծրագրային համակարգը, որն ապահովելու է որակավորման ու մասնագիտական գիտելիքների ստուգման քննությունների հարցաշարերի վարման և անցկացման, հանձնաժողովների անդամների մուտքագրման աշխատանքների հնարավորությունը, ինչը թույլ կտա այն անցկացնել թափանցիկ՝ բացառելով մարդկային գործոնը:

Ծրագիրը պետք է բաղկացած լինի որակավորման բաժիններից՝ ըստ տեսակի:
(օրինակ՝ 1. Գնահատում, 2. Քարտեզագրություն, գեոդեզիա, չափագրում (հաշվառում) և հողաշինարարություն, 3. Գրանցում:)

Ծրագիրը պետք է թույլ տա ստեղծել նոր բաժին, խմբագրել բաժնի անվանումը, և հեռացնել բաժինն ամբողջ բովանդակությամբ:

Ծրագրի յուրաքանչյուր բաժինը պետք է ունենա երկու ինտերֆեյս՝ քննության մասնակցի (դիմորդի) և հանձնաժողովի անդամների համար:

Հանձնաժողովի անդամների համար նախատեսված ինտերֆեյսը

պետք է բաղկացած լինի չորս հիմնական ենթաբաժիններից՝

Օգտատերեր, Կարգավորումներ, Շտեմարան և Քննություններ:

Օգտատերեր ենթաբաժինը պետք է հնարավորություն տա ավելացնել, դիտել, խմբագրել, հեռացնել ծրագրի օգտատերերին, հանձնաժողովի անդամներին, և նշանակել հանձնաժողովի անդամներ: Օգտատերերը պետք է առանձնացված լինեն՝ ըստ իրենց դերի, և այդ դերով պետք է սահմանափակվի յուրաքանչյուր օգտատիրոջ հնարավոր գործողությունները ծրագրում: Ծրագիրը պետք է տարբերակի օգտատերերի չորս տեսակ՝ հանձնաժողովի նախագահ, հանձնաժողովի քարտուղար, հանձնաժողովի անդամ, դիմորդ: Յուրաքանչյուր օգտատեր պետք է ստանա իր առանձին ծածկանունն ու գաղտնաբառը ծրագրից օգտվելու համար:

Կարգավորումներ ենթաբաժինը պետք է նախատեսված լինի քննության կարգավորումներն իրականացնելու համար, որոնց միջոցով պետք է սահմանվեն.

1. թեստավորման տևողությունը,
2. թեստավորման հարցաշարում շտեմարանի յուրաքանչյուր ենթախմբից ընտրվվող հարցերի քանակը՝ սահմանելով միաժամանակ ընդհանուր հարցաշարի ծավալը,
3. թեստավորման անցողիկ շեմի տոկոսը,
4. բանավոր քննության անհրաժեշտությունը (ակտիվացումը),
   4.1. բանավոր քննության հարցաշարում յուրաքանչյուր ենթախմբից ընտրվվող հարցերի քանակը՝ սահմանելով միաժամանակ ընդհանուր հարցաշարի ծավալը,
   4.2. բանավոր քննության անցողիկ շեմի տոկոսը,
5. գրավոր քննության անհրաժեշտությունը (ակտիվացումը),
   5.1. գրավոր քննության առաջադրանքները:

Յուրաքանչյուր բաժնում այս կարգավորումները հետագայում օգտագործվում են լռելյայն բոլոր հաջորդող քննությունների համար: Ցանկացած քննությունից առաջ հնարավոր է փոփոխել կարգավորումները:

Շտեմարան ենթաբաժնում պետք է հնարավորություն տրված լինի.

- ներբեռնել թեստավորման շտեմարան ըստ ենթախմբերի, առանձին ֆայլերով,
  - բովանդակության ձևաչափը՝ ենթախումբ, հարց, պատասխաններ, ճիշտ պատասխանի ցուցիչ,
- ներբեռնել բանավոր քննության շտեմարան ըստ ենթախմբերի, առանձին ֆայլերով,

- բովանդակության ձևաչափը՝ ենթախումբ, հարց, ճիշտ պատասխան.
- ներբեռնել պրակտիկ առաջադրանքների շտեմարան.
  - բովանդակության ձևաչափը՝ առաջադրանք, օրինակելի ֆայլի հղում.
- արտահանել ցանկացած շտեմարան՝ ներբեռնման ձևաչափի համապատասխան.
- արտահանել քննության անցկացման հետ կապված վիճակագրական տվյալներ.
- դիտել տվյալների բազայում առկա հարցերը, խմբագրել և/կամ հեռացնել.

Քննություններ ենթաբաժնում պետք է առանձնացված լինեն հետևյալ մասերը՝ Պլանավորված, Ընթացիկ, Ավարտված, որոնցից յուրաքանչյուրը հնարավորություն կտա դիտել, իսկ առաջինի դեպքում (Պլանավորված) նաև խմբագրել, համապատասխան քննության տվյալները: Քննության մանրամասներ բաժնում պետք է արտացոլվեն քննության համապարփակ տվյալները. Դրանք են.

- Քննության հիմնական տվյալները՝ քննության օր և ժամ,
- Քննության կարգավիճակը՝ 1. Պլանավորված է, 2. Սկսված է, 3. Չի կայացել, 4. Ավարտված է և 5. Արխիվ (1-ից կարելի է անցնել 2 կամ 3, 2-ից՝ 4, 3-ից և 4-ից՝ 5).
- Քննության մասնակիցների տվյալները,
- Հանձնաժողովի անդամները,
- Ելքային ձևերի արտածում

Սկսված է կարգավիճակով քննության դեպքում նաև պետք է լինի հնարավորություն յուրաքանչյուր մասնակցի համար ավելացնել թեստավորման քննության ժամանակը, եթե ընթացքում ծագել են որոշակի տեխնիկական խնդիրներ. Քննության բոլոր մասնակիցների կողմից թեստավորման քննությունն ավարտելուց կամ նախատեսված ժամանակի սպառվելուց հետո տվյալ քննության կարգավիճակը փոխվում է Ավարտված է, և այդ պահից սկսած պետք է հասանելի լինի նաև քննության թեստավորման հարցաշարը, թեստավորման հարցաշարը տպելու հնարավորություն, ինչպես նաև բանավոր քննության և/կամ պրակտիկ առաջադրանքի առկայության դեպքում՝ թեստավորման անցողիկ շեմը հաղթահարած մասնակցի համար համապատասխան հարցաշար և առաջադրանք տպելու հնարավորություն: Թեստավորման ավարտից հետո տվյալ հարցաշարում պետք է հնարավորություն լինի ցանկացած հարց նշել որպես սխալ (եթե հանձնաժողովի որոշմամբ ընդունվում է հարցի սխալ ձևակերպում, անճշտություն պատասխանի հնարավոր տարբերակների մեջ, և այլն), որից հետո համակարգը ավտոմատ պետք է կատարի քննության մասնակիցների միավորների վերահաշվարկ.

Նոր քննությունը ստեղծվում է մի քանի փուլով՝

1. Հանձնաժողովի քարտուղարը, համապատասխան բաժինն ընտրելուց հետո, ներդրված օրացույցից ընտրում է քննության անցկացնման օրն ու ժամը, և ստեղծում է քննություն՝ համակարգում առկա վերջին քննության կարգավորումներին համապատասխան կամ լռելյայն.

2. Թեստավորման շտեմարանի յուրաքանչյուր ենթախմբից պատահականության սկզբունքով ծրագիրը ավտոմատ կազմում է հարցաշար՝ կարգավորումներով նշված հարցերի քանակին համապատասխան: Ընտրված թեստավորման հարցաշարը ծրագրում հնարավոր է տեսնել միայն քննության ավարտից հետո,

3. Ծրագրի կողմից ավտոմատ նշանակվում է հանձնաժողովը,

4. Քարտուղարը մուտքագրում է քննության մասնակիցների տվյալները,

5. Քննությունը սկսելուց առաջ քարտուղարը կատարում է հանձնաժողովի անդամների ներկա-բացակա՝ նշումներ կատարելով քննության համապատասխան բաժնում: Հանձնաժողովի անդամների կեսից ավելիի բացակայության դեպքում քննությունը ծրագրի կողմից ավտոմատ հեռարվում է չկայացած,

6. Քննությունը սկսելուց առաջ քարտուղարը կատարում է նաև քննության մասնակիցների կարգավիճակի նշումները, ընտրելով հնարավոր չորս տարբերակից՝ 1. թույլատրված է 2. հրաժարվել է մասնակցել, 3. մերժվել է մասնակցությունը, 4. չի մասնակցել.

7. Քննության բոլոր տվյալները նշելուց հետո, քննության կարգավիճակը փոխվում է Սկսված է-ի, որից հետո հնարավոր չէ ոչինչ փոփոխել քննության տվյալներում, այդ թվում նաև հանձնաժողովի անդամների և մասնակիցների կարգավիճակի փոփոխում.

Ծրագրի քննություն բաժնում պետք է լինի հնարավորություն հետևել ընթացիկ քննության տվյալներին՝ տվյալ պահին յուրաքանչյուր մասնակցի ճիշտ և սխալ պատասխանած, ինչպես նաև դեռ չանդրադարձած հարցերի քանակին.

Ծրագրում քննության մասնակցի համար.

Նախատեսված ինտերֆեյսում մասնակիցը մուտք գործելով համակարգ (յուրաքանչյուր մասնակից օգտագործում է իրեն կցված օգտատիրոջ ծածկանունն ու գաղտնաբառը համակարգ մուտք գործելու համար): Մասնակցի կողմից քննությունը սկսելուց հետո, համակարգի կողմից մասնակցին է կցվում քննության թեստավորման հարցաշարը, պատահականության սկզբունքով ընտրված հարցերի հերթականությամբ: Մասնակցի ինտերֆեյսը բաղկացած է երկու մասից, մի մասում ներկայացվում են բոլոր հարցերը համապատասխան նշումով (արդյոք մասնակիցը պատասխանել է հարցին, թե ոչ), որը թույլ է տալիս մասնակցին հեշտությամբ տեսնել պատասխանած և բաց թողնված հարցերը, և ընտրելով ցանկացած հարց տվյալ ցուցակից՝ պատասխանել հարցին կամ փոխել արդեն իսկ ընտրված պատասխանը: Ինտերֆեյսի մյուս բաժնում ներկայացվում է հարցը իր հնարավոր չորս տարբերակներով: Մասնակիցը հնարավորություն ունի պատասխանել հարցին, կամ անցնել հաջորդնախորդ հարցին՝ հետագայում դրան անդրադառնալու հնարավորությամբ: Յուրաքանչյուր մասնակցի համար քննության սկիզբը որոշվում է անհատական, մասնակցի քննությունը սկսելու պահից: Քննության տևողությունը հաշվարկվում է համակարգի կողմից ավտոմատ, և այն լրանալուն պես քննությունը համարվում է ավարտված տվյալ մասնակցի համար: Մինչև համակարգի կողմից քննության ավարտելը մասնակիցն ինքը հնարավորություն ունի ավարտել քննությունը: Քննության ավարտից հետո մասնակցի ինտերֆեյսում երևում է ամբողջ հարցաշարը, որտեղ նշված են մասնակցի ընտրած և ճիշտ պատասխանները: Նաև ներկայացվում է ամփոփ տեղեկություն վստահված միավորների, չանդրադարձած հարցերի, ճիշտ ու սխալ պատասխանների քանակի և անցողիկ շեմը հաղթահարելու կամ չհաղթահարելու վերաբերյալ: Այս տվյալները հասանելի են մասնակցին քննությունն ավարտելուց հետո հինգ րոպեի ընթացքում, որից հետո մասնակիցը ավտոմատ դուրս է գալիս համակարգից:

Ըստ քննության կարգավորումների՝ անցողիկ շեմը հաղթահարած մասնակիցների համար պատահականության սկզբունքով կազմվում են, համապատասխանաբար, բանավոր քննության և/կամ պրակտիկ առաջադրանքի հարցաշարերն ու առաջադրանքները, որից հետո քննությունը անցնում է Արխիվ կարգավիճակի.

2. Տեխնիկական բնութագիր

Ծրագրավորման լեզուն պետք է լինի Java (տարբերակ 8): Համակարգի հենքում պետք է լինեն Spring (տարբերակ 4 կամ ավելի բարձր, մասնավորապես՝ Spring Security, Spring MVC) և Thymeleaf: Ընտրված տեխնոլոգիաները հնարավորություն պետք է տան ապահովել ծրագրի անխափան աշխատանքը և անվտանգության խնդիրները: Ծրագրում հնարավոր չպետք է լինի կատարել գործողություն, որի համար տվյալ օգտատերը իրավասու չէ: Ծրագիրը չպետք է հասանելի լինի ինտերնետի միջոցով, և պետք է բացառվի որևէ արտաքին միջամտություն ծրագրի աշխատանքին:

Ծրագիրը պետք է աշխատի լոկալ ցանցում, որը պետք է սահմանափակված լինի նախօրոք ընտրված և մականշված համակարգիչների համար (ըստ համակարգչի, որի վրա տեղակայված է համակարգը): Այս սահմանափակումը պետք է հնարավոր լինի կառավարել անմիջապես ծրագրի մեջ՝ հատուկ էջի միջից ավելացնելով կամ պակասեցնելով թույլատրելի համակարգիչների IP հասցեները: Վերը նշված էջը պետք է հասանելի լինի միայն հատուկ դեր ունեցող օգտատերերին: Ծրագրի տվյալների բազան պետք է բաժանված լինի երկու մասի: Տվյալների բազայի համար պետք է օգտագործված լինեն PostgreSQL և MongoDB տվյալների համակարգերը, որոնք պետք է ապահովեն ծրագրի տվյալների բազայի անվտանգությունը, ինչպես նաև ավտոմատ կերպով պարբերաբար պետք է կատարվի տվյալների բազայի արխիվացում, որից հնարավոր պետք է լինի վերականգնել ամբողջ բազան, եթե այն խափանվում է որևէ խնդրի պատճառով: Ծրագրի օգտագործման ամբողջ ընթացքում ծրագրում կատարված ցանկացած գործողություն, ինչպես նաև ընթացքում առաջացած խնդիրները և դրանց հնարավոր պատճառները պետք է արձանագրվեն լոգավորման հատուկ համակարգի միջոցով (Logging system): Այդ ֆայլերը անհրաժեշտ է կազմել հատուկ ձևաչափով, այնպես, որ հասանելի լինի 3-րդ կողմի ծրագրերի միջոցով (Kibana, Logstash, Elasticsearch): Ծրագիրը պետք է աշխատի GNU/Linux միջավայրում:

Ծրագիրն իր ֆունկցիոնալ հնարավորության սահմաններում պետք է ամբողջությամբ ծածկված լինի սինթետիկ թեստավորմամբ:

Համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ մատուցողը պետք է իրականացնի տեխնիկական սպասարկման հետևյալ ծառայությունները.

- Համակարգերում գործառույթների իրականացման ընթացքում առաջացող ընթացիկ խոչընդոտների կարգաբերում,
- Համակարգում ներդրված էլեկտրոնային ծառայությունների աշխատանքի ընթացքում հայտնաբերված թերությունների կամ սխալների վերացում,
- Համակարգի հետ աշխատող անձնակազմին տեխնիկական աջակցություն,

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե
Հասցե՝ Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900013220026
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար __________ Ա. Գրիգորյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Դավթյան» ՍՊԸ
ՀՀ, Տավուշի մարզ, գ. Սևքար 19 փ. 1
Նրբ. տուն 2
«Արարատբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15[illegible]0100
ՀՎՀՀ 07618736

Տնօրեն __________ [illegible]Դավթյան
(ստորագրություն)

Հավելված N 2
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/05 ծանկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծանկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	48961300/1	Ծրագրային փաթեթների մշակման ծրագրեր	2945000	2945000	5890000	5890000	5890000	5890000	5890000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե
Հասցե՝ Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900013220026
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար՝ _____ Գ. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Դավթյան» ՍՊԸ
ՀՀ, Տավուշի մարզ, գ. Սևքար 19 փ. 1 նրբ. տուն 2
«Արարատբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15[illegible]740100
[illegible]

Տնօրեն՝ _____ Ա. Դավթյան
(ստորագրություն)

Հավելված 3
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/05 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն